



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

07 Տարբերի 2014 թ. № 44 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԶԱԿԱՆ
ՓԱՌԱՏՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «Ժ.1» կետերի՝ *հրամայում եմ՝*

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2014 թվականին անցկացվելիք մարզական փառատոնի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված մրցույթն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «06. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:

ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (այսուհետ՝ ԼՂՀ) 2014 թվականին անցկացվելիք մարզական փառատոնի (այսուհետ՝ Փառատոն) նպատակներն են՝

1) ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում Հայաստանի Հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում.

2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում:

2. Փառատոնի խնդիրներն են՝

1) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում, երիտասարդությանը մարզական խմբակներում ընդգրկում.

2) համայնքներում ֆիզկուլտուրայի օրերի անցկացման ավանդույթի վերականգնում.

3) անհատի ներդաշնակ զարգացում և աշխատունակության բարձրացում, առողջ ապրելակերպի ձևավորում:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Փառատոնի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Փառատոնի կազմակերպումն ու անցկացումը իրագործում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեն, իսկ Փառատոնի անցկացման անմիջական պատասխանատվությունը դրվում է համապատասխան քաղաքային համայնքների և Նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վրա:

3. ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Փառատոնն անցկացվելու է Հայաստանի Հանրապետության 48 քաղաքներում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում՝ հետևյալ ժամկետներում՝

- 1) Կոտայքի մարզ - սեպտեմբերի 10-15-ը (ք. Հրազդան, ք. Արուսյան, ք. Չարենցավան, ք. Նոր Հաճն, ք. Ծաղկաձոր, ք. Բյուրեղավան, ք. Եղվարդ, գ. Գառնի)
 - 2) Գեղարքունիքի մարզ - սեպտեմբերի 11-15-ը (ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Վարդենիս, ք. Սևան)
 - 3) Տավուշի մարզ - սեպտեմբերի 13-16-ը (ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ)
 - 4) Լոռու մարզ - սեպտեմբերի 14-18-ը (ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր, ք. Ախթալա, գ. Գուգարք)
 - 5) Շիրակի մարզ - սեպտեմբերի 15-19-ը (ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա, գ. Աշոցք, գ. Ախուրյան)
 - 6) Արմավիրի մարզ - սեպտեմբերի 16-18-ը (ք. Արմավիր, ք. Էջմիածին, ք. Մեծամոր)
 - 7) Արագածոտնի մարզ - սեպտեմբերի 16-18-ը (ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին)
 - 8) Արարատի մարզ - սեպտեմբերի 17-20-ը (ք. Արտաշատ, ք. Արարատ, ք. Մասիս, ք. Վեդի)
 - 9) Սյունիքի մարզ - սեպտեմբերի 19-23-ը (ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի)
 - 10) Վայոց ձորի մարզ - սեպտեմբերի 24-26-ը (ք. Եղեգնաձոր, ք. Վայք, ք. Ջերմուկ)
 - 11) ԼՂՀ - սեպտեմբերի 18-21-ը (ք. Ստեփանակերտ):
6. Փառատոնը յուրաքանչյուր քաղաքում անցկացվելու է մեկ օրում:

4. ՓԱՌԱՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Փառատոնը սկսվում է բացման հանդիսավոր արարողությամբ, որին մասնակցում են քաղաքային և գյուղական համայնքների, ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների և այլ մարզական կազմակերպությունների թիմերը: Մարզադաշտի տարբեր հատվածներում ցուցադրական ելույթներով (պարանի ձգում, կշռաքարերի նետում, կարատե, բռնցքամարտ, ազգային ժողովրդական խաղեր՝ քաշոցի, գոտեմարտ, աքլորախաղ, լախտի և այլն) հանդես են գալիս մարզական և գեղարվեստական տարբեր խմբակներ:

8. Շքերթի ավարտից հետո սկսվում են Փառատոնի ծրագրով նախատեսված 7 մարզաձևերի մրցումները, որոնք կարող են անցկացվել տարբեր մարզակառույցներում:

9. Փառատոնի անցկացման կարգն ու պայմանները որոշում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեն: Ելնելով մարզի հնարավորություններից և ավանդույթներից՝ մրցումների ծրագրի մեջ կարող են կատարվել մասնակի լրացումներ ու փոփոխություններ:

10. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեն Փառատոնի նախնական ծրագրերը և ժամանակացույցները ըստ քաղաքների ներկայացնում են Նախարարություն մինչև սեպտեմբերի 30-ը:

11. Փառատոնի ավարտից հետո՝ տարեվերջին, Նախարարության համապատասխան հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի կողմից ներկայացված տեսաժապավենների հիման վրա որոշում է 2014 թվականի Փառատոնում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված քաղաքները: